

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»  
ԻԱՄ խորհրդի  
13/09/2010թ թիվ 11-Լ որոշմամբ

Փոփոխված է՝ 06/10/2010թ թիվ 15-Լ որոշմամբ  
17/11/2010թ թիվ 20-Լ որոշմամբ  
31/01/2013թ թիվ 23-Լ որոշմամբ  
13/12/2013թ թիվ 38-Լ որոշմամբ  
31/03/2015թ թիվ 61-Լ որոշմամբ  
28/02/2017թ թիվ 12-Լ որոշմամբ

«Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո»  
ԻԱՄ խորհրդի նախագահ

\_\_\_\_\_ Ներսես Երիցյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

(վերջին փոփոխությունը գրանցված է)  
ՀՀ կենտրոնական բանկում

«17» մարտի 2017թ

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ

\_\_\_\_\_ Արթուր Զավադյան

## ԿԱՆՈՆՆԵՐ RL 1-008

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՎՏՈԱՊԱՀՈՎԱԳՐՈՂՆԵՐԻ ԲՅՈՒՐՈ»

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՄԻՈՒԹՅԱՆ

(ԱՊՊԱ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳ)

ԵՐԵՎԱՆ - 2017

1. Սույն կանոններով սահմանվում է ԱՊՊԱ պայմանագրերի հաշվառման կարգը:

2. ԱՊՊԱ վկայագիրն ունի ծածկագիր, որը բաղկացած է սերիայից և համարից, ընդ որում՝ սկզբից նշվում է սերիան, այնուհետև՝ համարը: Սերիան պարունակում է 2 նիշ, իսկ համարը՝ 6 նիշ՝ սկսած 000001-ից: ԱՊՊԱ վկայագրի ծածկագրերը չեն կրկնվում, անգամ եթե տվյալ ԱՊՊԱ պայմանագիրն այլևս ուժի մեջ չէ:

3. Սերիայի նիշերը մեծատառ են և լատինատառ: Սերիայի առաջին նիշը սահմանվում է “S”, իսկ երկրորդ նիշը փոփոխվում է ըստ այբբենական հերթականության (SA, SB, SC ... SZ):

4. ԱՊՊԱ վկայագրի սերիաները տրամադրվում են «Հայաստանի ավտոապահովագրողների բյուրո» ԻԱՄ (այսուհետ՝ Բյուրո) անդամ ապահովագրական ընկերություններին (այսուհետ՝ անդամ ընկերություններ) Բյուրոյի կողմից: Ընդ որում, յուրաքանչյուր անդամ ընկերության տրամադրվում է սերիա՝ հերթական համարի բոլոր հնարավոր համակցություններով:

5. Անդամ ընկերություններին առաջին անգամ ԱՊՊԱ վկայագրի ծածկագրերը տրամադրվում են՝ ըստ Բյուրոյում անցկացվող վիճակահանության՝ օգտագործելով վիճակահանության պահին անդամ ընկերությունների քանակի չափով այբբենական հերթականությամբ սերիաներ:

6. Անդամ ընկերության կողմից լրացուցիչ սերիայի հայտ ներկայացնելու դեպքում դիմումատու ընկերությանը տրամադրվում է հերթական չօգտագործված սերիան ըստ դիմումի ընդունման ամսաթվի՝ հաշվի առնելով սույն կանոնների 5-րդ կետում նկարագրված հերթականության սկզբունքը:

7. Անդամ ընկերությունը կարող է դիմել Բյուրոյին լրացուցիչ սերիա ստանալու համար, երբ իր ԱՊՊԱ վկայագրի չօգտագործված ծածկագրերի քանակը փոքր է կամ հավասար հիսուն հազարից:

8. ԱՊՊԱ վկայագրերի համարները լրացվում են լրացված ԱՊՊԱ վկայագիրը հաստատելու պահին՝ ԱԱՄՊ համակարգի կիրառմամբ՝ ըստ պայմանագրերի կնքման հաջորդականության հերթական համարակալման սկզբունքով՝ անկախ այն հանգամանքից, թե տվյալ ԱՊՊԱ պայմանագիրը ով է կնքում անդամ ընկերության անունից: **(8-րդ կետը փոփ. է 31/03/2015թ թիվ 61-Լ)**

9. ԱՊՊԱ պայմանագրի վնասման (խոտանման) դեպքում անդամ ընկերությունը ԱՊՊԱ վկայագրի երկու օրինակների վրա անկյունագծով կատարում է «Անվավեր» նշումը, որից հետո դրանք հաշվառվում են անդամ ընկերությունում, որպես անվավեր ճանաչված ԱՊՊԱ վկայագրեր:

10. ԱՊՊԱ պայմանագրի կորստի, հափշտակման կամ ոչնչացման դեպքում դրանք հաշվառվում են անդամ ընկերությունում, որպես կորած (հափշտակված, ոչնչացված) ԱՊՊԱ պայմանագրեր:

11. Այն դեպքում, երբ Ապահովադրին տրված ԱՊՊԱ պայմանագիրը վնասվել է (խոտանվել է), կորել, հափշտակվել կամ ոչնչացվել է, ապա Ապահովադրի (Ապահովադրի լիազորված անձի) դիմումի հիման վրա նրան տրվում է ԱՊՊԱ պայմանագրի կրկնօրինակ:

12. Սույն կանոնների 8-րդ կետով սահմանված ծրագրային ապահովման համակարգը պետք է պաշտպանված լինի չթույլատրված մուտքից, օգտագործումից, փոփոխումից և ոչնչացումից, լինի հավաստի և ժամանակի յուրաքանչյուր պահի պետք է հնարավորություն ընձեռի ստանալ (արտահանել) առնվազն հետևյալ տեղեկատվությունը՝

1) անդամ ընկերության կողմից (անունից) կնքված ԱՊՊԱ պայմանագրերի քանակը,

2) յուրաքանչյուր ԱՊՊԱ վկայագրի տպագրման ժամը, րոպեն, ԱՊՊԱ վկայագիրը տպագրած անձի նույնականացման համար անհրաժեշտ տվյալները,

3) ԱՊՊԱ պայմանագրերի վերաբերյալ սույն կանոնների 9-րդ և 10-րդ կետերով սահմանված տեղեկատվությունը:

13. Բյուրոյի կողմից թույլատրված ժամկետում ԱՊՊԱ պայմանագրերի կնքումը ԱԱՄՊ համակարգին զուգահեռ կարող է իրականացվել նաև անդամ ընկերության համապատասխան ծրագրային ապահովման կիրառմամբ: Ընդ որում, անդամ ընկերության համապատասխան ծրագրային ապահովման կիրառմամբ կնքված ԱՊՊԱ վկայագրերի համարները լրացվում են ինքնաշխատ սույն կանոնների 8-րդ կետով սահմանված սկզբունքին համաձայն՝ ԱԱՄՊ համակարգի օգտագործմամբ կնքված պայմանագրերի համարակալումից առանձնացված կարգով: Սույն կետով նախատեսված զուգահեռ համակարգերի կիրառման ապահովելու նպատակով Բյուրոն իր նախաձեռնությամբ անդամ ընկերություններին կարող է տրամադրել ԱԱՄՊ համակարգի օգտագործմամբ կնքվող ԱՊՊԱ պայմանագրերի համար կիրառման ենթակա ԱՊՊԱ վկայագրերի լրացուցիչ սերիաներ՝ հիմք ընդունելով անդամ ընկերությունների անվանումների այբբենական հերթականությունը: *(13-րդ կետը լրաց. է 31/03/2015թ թիվ 61-Լ)*